

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԱՐԺԱՆԹԻՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Posted on December 23, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Հայ, Հրեայ Եւ Իսլամ

Պուլենոս Այրես, Դեկտեմբեր 22, 2011 (ԱՐՄԵՆԻԱ).- Արժանաբանի մէջ Հ.Յ.Դաշնակցութեան գործունեութիւնը իրաւական կերպով ներկայացնող Արմենիա Մշակութային Ընկերակցութիւնը կարեւոր համաձայնագիր մը ստորագրեց երկրի հրեայ եւ իսլամ համայնքներու ներկայացուցչական կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ Ի.Ն.Ա.Տ.Ի.ի (Խտրականութեան, Օտարատեացութեան եւ Ցեղապաշտութեան դէմ Ազգային Ինստիտուտ), Ս.Ի.Խ.Ե.Ն.ի (Արժանաբանի Ընդհանուր Սինտիքաթուրա) եւ Լանուսի Ազգային Համալսարանի հետ:



Հայ, Հրեայ Եւ Իսլամ

Պուլենոս Այրես, Դեկտեմբեր 22, 2011 (ԱՐՄԵՆԻԱ).- Արժանաբանի մէջ Հ.Յ.Դաշնակցութեան գործունեութիւնը իրաւական կերպով ներկայացնող Արմենիա Մշակութային Ընկերակցութիւնը կարեւոր համաձայնագիր մը ստորագրեց երկրի հրեայ եւ իսլամ համայնքներու ներկայացուցչական կազմակերպութիւններու, ինչպէս նաեւ Ի.Ն.Ա.Տ.Ի.ի (Խտրականութեան, Օտարատեացութեան եւ Ցեղապաշտութեան դէմ Ազգային Ինստիտուտ), Ս.Ի.Խ.Ե.Ն.ի (Արժանաբանի Ընդհանուր Սինտիքաթուրա) եւ Լանուսի Ազգային Համալսարանի հետ:



Համաձայնագրի տրամադրութեանց հետեւումով, նշեալ համալսարանին մէջ ստեղծուեցաւ Հետազօտութեան, Չարգացման եւ Դաստիարակման Կեդրոնը, որուն ծիրին մէջ հայ, հրեայ եւ իսլամ համայնքները միասնական ծրագրեր պիտի առաջացնեն՝ երկրին մէջ մշակութային, կրօնական եւ էթնիքական տարբերութիւններու նկատմամբ աւելի լայն յանձնառութիւն ստեղծելու եւ բազմամշակութայնութիւնը որպէս ժողովրդավարական արժէք տարածելու նպատակով:

Պետական ֆինանսաւորումով առաջանալիք այս ծրագիրները պիտի գործադրուին երկրի ամբողջ տարածքին Ի.Ն.Ա.Տ.Ի.ի միջոցաւ եւ Լանուսի Ազգային Համալսարանի գիտաշխատողներուն պիտի վստահուի անոնց գիտական հովանաւորումն ու արդիւնքներու առարկայական արժեւորումը:

Արմենիա Մշակութային Ընկերակցութեան անունով համաձայնագիրը ստորագրեց Հ.Յ.Դաշնակցութեան Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Ժանիկ

Քեչեան: Համաձայնագրի ստորագրութեան ներկայ եղաւ Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի շրջանային տնօրէն՝ Յակոբ Թապագեան, ինչպէս նաեւ Ի.Ն.Ա.Տ.Ի.ի նախագահ՝ Փետրո Մուրատեան:

Ինչ կը վերաբերի ծրագրերու բովանդակութեան, ապա եւ ըստ երեք համայնքներու կողմէ համաձայնագիրը ստորագրած ներկայացուցչական կազմակերպութիւններու պատասխանատուներու յայտարարութեանց, կը նախատեսուին՝ հրատարակութիւններ, միացեալ միջոցառումներ, ակադեմական գիտահետազոտութիւններ եւ ուսուցման ծրագիրներու միասնական մշակում:

Համաձայնագրի ստորագրութեան մասին այլ մանրամասնութիւններու համար կարելի է այցելել հետեւեալ կայքէջը՝

<http://www.youtube.com/watch?v=22lBiULTA3g&feature=share>

